ՆԿԱՐԵՑԻ (էջ 19)

Հարցեր և *առաջադրանքներ.*

- Նկարի՛ր ընտանիքիդ նկարը: Պատմի՛ր քո ընտանիքի անդամների մասին այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նկարել ես նրանց:
- Նկարագրի՛ր տղայի նկարում ընտանիքի անդամներին:
- Համեմատի՛ր քո նկարի հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան:
- Ի՞նչը կարող է ուրախություն բերել ձեր ընտանիք:
- Ինչու՞ բանաստեղծության հերոսը իր նկարում երկինքը նկարեց կապույտ, ե՞րբ է այն կապույտ լինում:
- Բանաստեղծության մեջ ո՞ր գույների մասին է նշվում ու արևը ո՞ր գույնով կներկեիր:
- Կա՞ արդյոք ընդհանրություն *զինվորի* և *խաղաղության աղավնու* միջև: Մեկնաբանի՛ր:
- Ի՞նչ ես կարծում, մայրիկը տորթն ու՞մ համար էր պատրաստել:
- Տարվա ո՞ր եղանակն է պատկերված բանաստեղծության նկարազարդման մեջ:
- Քո կարծիքով Է՞լ ով կարող էր «ապրել» հերոսի նկարում:
- Ինչո՞վ է բանաստեղծության հերոսը նման քեզ: Համեմատի՛ր:

❖ ա. Տեքստից դու՛րս գրիր երեխայի նկարած պատկերների անունները:

_____

բ. Գրի՛ր այդ բառերի հնչյունների և տառերի քանակը:

Օրինակ՝ տուն - 3 տառ, 3 հնչյուն, արև - 3 տառ, 4 հնչյուն:

_____

_____

❖ Ընտրի՛ր և նախադասության մեջ լրացրու՛ ճիշտ բառը:

Ես _____ (հնչյուն, տառ) եմ, ինձ *արտասանում են* և *լսում*:

Ես _____ (հնչյուն, տառ) եմ, ինձ *գրում են* և *կարդում*:

- Բանաստեղծությունից դու՛րս գրիր այն տողը, որտեղ խոսվում է նկարի «պահապանի» մասին՝ փոխելով քաջ բառը իր «ընկեր» բառով։

_____

_____

- Գրի՛ր կամ նկարի՛ր ընտանիքում քո պարտականությունները։

- Գրի՛ր նամակ քո ճանաչած զինվորին։

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՀԱՅՐՍ ԴԱՇՏԻՑ ՏՈՒՆ ԵԿԱՎ (էջ 20)

Հարցեր և *առաջադրանքներ.*

- ✓ Ու՞մ հետ և որտե՞ղ էր ապրում փոքրիկը (գյուղում, ավանում, քաղաքում)։
- ✓ Ինչու՞ էր դաշտից գալիս փոքրիկի հայրիկը։ Ինչե՞ր բերեց իր հետ։ Էլ ի՞նչ կարող էր բերել։ Քո կարծիքով՝ ի՞նչ կբերեր փոքրիկի հայրը, եթե տուն գար անտառից, քաղաքից…
- ✓ Կարդա՛ բանաստեղծության վերջին 2 տողը և բացատրի՛ր «շենացնել» բառի նշանակությունը։
- ✓ Դու ի՞նչ ես զգում, երբ հայրիկդ տուն է գալիս. պատմի՛ր։
- ✓ Պատմի՛ր դասընկերներիդ, թե ո՞ր գործերն ես հայրիկիդ հետ միասին սիրում անել։
- ✓ Շարունակի՛ր բանաստեղծությունը՝ հորինելով ևս 1 տող և արտասանի՛ր ընկերներիդ համար։

- ✓ Ինչպե՞ս ես հասկանում ասացվածքը։ Մեկնաբանի՛ր։

Աշխարհի մեջ ամեն ինչ կարող ես ձեռք բերել՝ բացի ծնողներից։

- Բանաստեղծությունից դու՛րս գրիր այնպիսի բառազույգեր, որոնց վերջին և առաջին տառը նույնն է։ Օրինակ՝ բուրմուն***ք*** – ***ք***ամի։
- Բանաստեղծությունից դու՛րս գրիր 3-ական միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառեր։

միավանկ	*երկվանկ*	*եռավանկ*	*քառավանկ*

- Թեմատիկ նկարի մեջ և-ով ի՞նչ բառեր «կնկարես»: Գրի՛ր այդ բառերը և բաժանի՛ր վանկերի:

_____

_____

- Բացատրի՛ր՝ *ամպի արցունք*, *զուլալ կարկաչ*, *աստղերի խինդ* բառակապակցությունների իմաստը:
- Դու՛ս գրիր 2 բառ, որոնց հնչյունների և տառերի քանակը տարբեր է: Օրինակ՝ տերև - 4 տառ, 5 հնչյուն:

_____

_____

- ա. Համարակալի՛ր պատկերներն ըստ բանաստեղծության մեջ ներկայացված հաջորդականության:
  բ. Հետևի՛ր բանաստեղծության տողերին և համապատասխանաբար գրի՛ր, թե փոքրիկի հայրը այս պատկերներից ո՞րը բերեց:

--- --- ---

--- --- ---

- Գրի՛ր բանաստեղծություն քո հայրիկի մասին՝ լրացնելո՛վ համապատասխան տողերը։

Անունը _____

Ազգանունը _____

Հայրանունը _____

Տարիքը _____

Ծննդյան օրը _____

Աշխատանքը _____

Սիրում է _____

Չի սիրում _____

Ուզում է _____

Կարիք ունի _____

- Գրի՛ր 3 բառ, որոնցով կբնութագրես հայրիկիդ։

_____

- Գրի՛ առ այն խորհուրդները, որոնք տալիս է հայրիկդ քեզ։

_____

_____

_____

_____

- Գրի՛ր բանաստեղծության վերնագիրը և օգտվելով հետևյալ բառակապակցություններից՝ հյուսի՛ր փոքրիկ պատմություն։

հոգնած հայր, զուլալ կարկաչ, թռչունների դայլայլ,

անամպ ուրախություն, հայրական սեր

_____

_____

_____

_____

- Աղյուսակի համապատասխան սյուներում գրի՛ր բանաստեղծության իրական ու անիրական մտքերը:

Իրական	*Անիրական*
Օրինակ՝ երեկոյան մութն ընկավ	Ուսին ամպի արցունք բերեց

- Լրացրու՛:

Ի՞նչ տեսա:	*Ի՞նչ զգացի:*
Ի՞նչ լսեցի:	*Գրի՛ր նոր վերնագիր:*

Թեմա՝ ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ Մայրենի 2, Ա. Քյուրքչյան, Լ. Տեր - Գրիգորյան

ԲԱՐԻ ԼՈՒ՛ՅՍ, ՄԱՅՐԻ՛Կ (էջ 21)

Հարցեր և *առաջադրանքներ.*

I հատված՝

Երբ արթնանում ես ինչպե՞ս ես ողջունում քո տան անդամներին։

Ի՞նչ էր հերոսի անունը, ինչպե՞ս էր նա ողջունում տան անդամներին։

Քանի՞ ընկեր ուներ հերոսը, ուշադիր կարդա՛ ու թվարկի՛ր։

II հատված՝

Ինչպե՞ս էր ողջունում մայրիկը Գեղամին։

Ի՞նչ էր տալիս մայրն ամեն առավոտ, ինչո՞ւ էր տալիս։

Ինչո՞ւ չէր ուզում խմել ձկան յուղը,իսկ դու խմել ես երբևէ։

III հատված՝

Ի՞նչ բառերով էր արտահայտում իր սերը մայրը որդու նկատմամբ։

Իրոք լավագույնն էր Գեղամը, ինչո՞ւ էր այդպես ասում մայրը։

Ի՞նչ բառերով են դիմում քեզ քո ծնողները։

IV հատված՝

Ի՞նչ արեց Գեղամը։

Ինչպե՞ս վարվեց նա իր «ընկերոջ» հետ։

Ի՞նչ ասաց մայրիկին, ինչո՞ւ։

Ինչո՞ւ լռեց տղան, ի՞նչ էր մտածում։

V հատված՝

Ի՞նչ եղավ փիսոյի հետ։

Ի՞նչ էր զգում Գեղամը։

Ի՞նչ տրամադրությամբ բարևեց մայրիկին Գեղամը։

Ի՞նչ պատմեց մայրիկին տղան։

VI հատված՝

Ինչպե՞ս վարվեց մայրիկը։

Ի՞նչ եղավ փիսոյի հետ։

Ի՞նչ ասաց մայրիկն առավոտյան։

Ի՞նչ էր զգում փիսոն։

Հարցեր.

- ✓ Ինչպե՞ս են մարդիկ միմյանց բարևում օրվա տարբեր ժամերին։
- ✓ Ի՞նչ գիտես առողջ սննդակարգի մասին, ի՞նչ է քեզ խորհուրդ տալիս մայրիկդ այդ մասին. կատարու՞մ ես այդ խորհուրդները։
- ✓ Ինչպե՞ս են խնամում ընտանի կենդանիներին։
- ✓ Գեղամն ինչու՞ էր հուզվում և տանջվում ամբողջ գիշեր։
- ✓ Նա ե՞րբ հանգստացավ. ինչու՞։
- ✓ Բնութագրի՛ր՝ ինչպիսի՞ն պետք է լինի ազնիվ մարդը։
- ✓ Քեզ հետ երբևէ այդպիսի դեպք պատահե՞լ է. պատմի՛ր կամ հորինի՛ր նման պատմություն։
- ✓ Բացատրի՛ր հետևյալ արտահայտությունը՝

Ազնվությունը զարդարում է ցանկացած մարդու։

- ✓ Ի՞նչ կփոխեիր այս պատմվածքի մեջ, ինչու՞։
- ✓ Նշի՛ր մարդու և կենդանու տարբերությունները և բացատրի՛ր, թե Գեղամն ինչպես հասկացավ կատվին։

- Վերնագրի՛ր 1-ին և 2-րդ մասերը։

  _____

  _____

- Բնութագրի՛ր Գեղամին և բակի տղաներին՝ լրացնելո՛վ համապատասխան սյունակները։

Գեղամ	Տղաներ

- Գրի՛ր առողջ ապրելակերպի մասին կանոններ՝ հետևելով նաև Գեղամի մայրիկի և քո մայրիկի խորհուրդներին։

_____

_____

_____

_____

_____

_____

- Կարդա՛ 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ նախադասությունները, արտագրի՛ր՝ փոխելով բակի տղաների վատ վերաբերմունքն արտահայտող բառերը հոգատար վերաբերմունք արտահայտող բառերով։

_____

_____

_____

_____

- Գրի՛ր նամակ Գեղամին՝ խրախուսելով նրա ազնվությունը։

_____

_____

_____

_____

_____

ԵՐԳ ՄԱՅՐԻԿԻՍ (էջ 25)

Հարցեր և ***առաջադրանքներ.***

- Հեղինակը ինչերի՞ հետ է համամատում մայրիկի աչքերը, ձեռքերը, երգերը, համբույրը… Կարդա՛ այդ տողերը։
- Ի՞նչ է ուզում ասել հեղինակն այս արտահայտությամբ՝

  Եվ զով հովը մեղմ շոյում է, երբ մայրիկիս երգերը կան։
- Բանաստեղծության մեջ ընդգծի՛ր այն տողը կամ տողերը, որոնք ինքդ կցանկանայիր նվիրել մայրիկիդ։
- Ի՞նչ մեղեդի ես լսում թեմատիկ նկարին նայելիս։
- Քո մայրիկը տարվա ո՞ր եղանակին է նման, ինչու՞։
- Ինչպիսի՞ երաժշտությամբ կերգես այս բանաստեղծությունը՝ արագ, դանդաղ, ուրախ, տխուր։
- Փորձի՛ր գունավորել տողերը, ի՞նչ գույներ ընտրեցիր և ինչու՞։
- Ո՞ր գործերն ես դու մայրիկիդ հետ միասին կատարում։
- Պատրաստի՛ր բացիկ, որով շնորհակալություն կհայտնես մայրիկիդ կոնկրետ բանի համար։
- Ի՞նչ բառերով է սիրում քեզ քո մայրը։ Գրի՛ր մի քանիսը։



✓ Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր։

ջերմ	գրկել	_____
մեղմ	շոյել	_____
անուշ	ժպտալ	_____
քնքուշ	համբուրել	_____
	երգել	_____

✓ «Երգ մայրիկիս» բանաստեղծությունից ընտրի՛ր *Ե*-ով սկսվող 2 բառ և գործածի՛ր նախադասությունների մեջ։

_____

_____

_____

_____

✓ Արտագրի՛ր բառեր, որոնց տառերի և հնչյունների քանակը տարբեր է։
Օրինակ՝ երգ - 3 տառ, 4 հնչյուն։

_____

_____

✓ Բանաստեղծության տարբեր հատվածներից ընտրի՛ր իմաստով մոտ 2 բառ և գործածի՛ր նախադասությունների մեջ։

_____

_____

_____

_____

✓ Գտի՛ր, թե բանաստեղծության մեջ տարվա որ եղանակն է բացակայում և ինքդ ստեղծի՛ր մեկ քառատող դրա մասին։

_____

_____

_____

_____

✓ Գրի՛ր բանաստեղծություն քո մայրիկի մասին՝ լրացնելո՛վ համապատասխան տողերը։

Անունը _____

Ազգանունը _____

Հայրանունը _____

Տարիքը _____

Ծննդյան օրը _____

Աշխատանքը _____

Սիրում է _____

Չի սիրում _____

Ուզում է _____

Կարիք ունի _____

✓ Առաջին քառատողից դու՛րս գրիր մեկ միավանկ, 2-րդից՝ մեկ երկվանկ, 3-րդից՝ մեկ եռավանկ բառ։

_____

_____

✓ Աղյուսակի համապատասխան սյունակներում լրացրու՛ քո իմացած և նոր սովորած բառերը։

Մայրիկ, մթնշաղ, զով, աչքեր, գարուն, հով, ձեռքեր, աղբյուր, համբույր։

Գիտեի	*Իմացա*

ՄԱՅՐԻԿԻ ՀԱՇԻՎԸ (էջ 26)

Հարցեր և *առաջադրանքներ.*

1. Տեքստը բաժանել տրամաբանական հատվածների և պատասխանելով հարցերին՝ ընթերցել։

I հատված

Ի՞նչ է նշանակում հաշիվ բառը։

Ի՞նչ հաշիվներ գիտես, թվարկի՛ր, թե որտեղ ես տեսել։

II հատված

Ի՞նչ էր տղայի անունը։

Ինչպե՞ս ծանոթացավ տղան հաշիվ բառին։

Հայրը ի՞նչ մասնագիտություն ուներ։

Հայրը ինչպե՞ս էր մատուցում իր ծառայությունները։

III հատված

Ի՞նչ զգաց Դինուն, երբ կարդաց հիվանդ տղայի հաշիվը։

Ի՞նչ հասկացավ հաշիվ ասելով։

IV հատված

Ի՞նչ արեց տղան հետո, երբ օգնեց մայրիկին։

Ի՞նչ գտավ մայրիկը, երբ արթնացավ։

Ի՞նչ զգաց մայրիկը։

V հատված

Ինչպե՞ս վարվեց մայրիկը

Ի՞նչ զգաց տղան, երբ կարդաց հաշիվը։

Հարցեր հատվածների վերաբերյալ.

- ✓ Ինչո՞վ էր զբաղվում Դինուի հայրը և ի՞նչ հաշիվներ էր գրում։
- ✓ Դինուն ինչի՞ մասին հաշիվ գրեց. նա ճի՞շտ վարվեց։
- ✓ Կարդա՛ Դինուի ընթերցած առաջին հաշիվը և պատմի՛ր բժշկի կատարած գործերի մասին։
- ✓ Մայրն ինչպե՞ս ուղղեց որդու սխալը։
- ✓ Քո կարծիքով է՞լ ինչպես կվարվեր Դինուի մայրը հաշիվը կարդալուց հետո։
- ✓ Կարդա՛ տեքստի կարևոր նախադասությունը/հատվածը։
- ✓ Ավելացրու՛ մի քանի նախադասություն տեքստին, քո կարծիքով ի՞նչ կլինի հետո։
- ✓ Դու՞ ինչպես ես օգնում մայրիկիդ, պատմի՛ր մի դեպք քո կյանքից։
- ✓ Ինչպե՞ս կվարվեիր դու Դինուի փոխարեն։
- ✓ Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ էր հեղինակը պատմվածքն այդպես ավարտել։
- ✓ Եթե դու հանդիպեիր Դինուին, ապա ի՞նչ խորհուրդ կտայիր նրան։
- ✓ Համառոտ պատմի՛ր պատմության մասերի բովանդակությունը և վերնագրի՛ր դրանք։

2. Տրված 2 շարք բառերից ընտրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը և գրի՛ր օրինակի պես.
3.

չար, շատ, վերցնել, գիշեր, մոտ, վրա, հիմար, բացել, քնել, ուրախություն, հիվանդ.

առողջ, դնել, հեռու, տակ, վերցնել, փակել, արթնանալ, տխրություն, բարի, քիչ, խելացի.

Օրինակ՝ վերցնել - դնել։

4. Արտագրի՛ր՝ համապատասխան բառը գրելով։

Գարնանային _____ (***պայծառ, մռայլ***) առավոտ էր։ Արևը փայլում էր _____ (***ջինջ, ամպամած***) երկնքում։ Թռչուններն _____ (***ուրախ, տխուր***) ճռվողում էին անտառում։ Փոքրիկ եղնիկը _____ (***մտավ, դուրս եկավ***) անտառից։ Նա զգույշ _____ (***մոտեցավ, հեռացավ***) աղբյուրին, որ բխում էր լեռան _____ (***գագաթից, ստորոտից***)։ Նա խմեց աղբյուրի _____ (***տաք, սառնորակ***) ջրից ու նորից վազեց անտառ։

5. Դու՛ս գրիր Դինուի կատարած գործերը։
6. Նկարագրի՛ր Դինուի մայրիկին։
7. Նկարագրի՛ր Դինուին՝ լրացնելով համապատասխան տողերը։

Անունը _____

Սեռը _____

Ազգությունը _____

Ընտանիքի անդամները _____

Սովորում էր _____

Բնավորությունը _____

8. Պատրաստել «Տրամադրության պաստառ»։ Նախընտրած գույնի թղթի վրա գրել, թե ինչ զգաց տեքստն ընթերցելիս։
9. Պատկերել «Ջերմաչափ» և սանդղակի վրա նշել յուրաքանչյուր խմբի զգացողությունները՝ տեքստի վերաբերյալ խոսքերի միջոցով։

I խումբ՝ մենք տխրեցինք կարդալով մայրիկի խոսքերը։

I I խումբ՝ մենք ուրախացանք , որ Դինուն հասկացավ իր սխալը։

I I I խումբ՝ մենք ուրախացանք….



10. «Մտածի՛ր, մտքե՛ր փոխանակիր» մեթոդով գրել խմբային նամակ և տեղադրել նամականիի տուփում՝

Նամակ Դինուին

Բարև՛, սիրելի՛ Դինու _____

_____

_____

_____

_____

_____

ԻՄ ՀԵՐՈՍ ՊԱՊԸ (էջ 30)

Հարցեր և ***առաջադրանքներ.***

- Ու՞մ նկարն է պատից կախված, քանի՞ տարի է նա ապրել։
- Ի՞նչ միտք է արտահայտված վերջին քառատողում։
- Թոռնիկն ինչի՞ համար է ափսոսում. գտի՛ր և կարդա՛ համապատասխան տողերը։
- Ինչու՞ է բանաստեղծության մեջ տատը ***արցունքն աչքին*** հեքիաթ ասում։
- Ի՞նչ էր պատմել տատիկը պապիկի սխրանքների մասին։
- Մեկնաբանի՛ր «ընդամենը քսան գարուն» արտահայտությունը։
- Վերջին տան մեջ կարդա՛՝ ի՞նչն էր պաշտպանել պապը։
- Կարդա՛ ասացվածքը և մեկնաբանի՛ր։
- Պատմի՛ր քո պապիկի մասին :
- Ի՞նչ գիտես Արցախյան 44-օրյա պատերազմի մասին։
- Ու՞մ են անվանում հերոս. ի՞նչ հերոսների անուններ գիտես։
- Բացատրիր՝ *հայրենիք, սխրանք, հերոս* բառերի նշանակությունը
- Ի՞նչ կասես աշխարհի քո հասկակիցներին խաղաղության և պատերազմի մասին։ Ի՞նչ կանեք, որ էլ պատերազմ չլինի։

- Շարունակի՛ր՝ ավելացնելով պապին բնութագրող նոր բառեր։

Պապ - հերոս, _____

- Նկարագրի՛ր քո պապիկին՝ լրացնելով համապատասխան տողերը։

Անունը _____

Ազգանունը _____

Տարիքը _____

Ծննդյան օրը _____

Սիրում է _____

Չի սիրում _____

Բնավորությունը _____

Կարիք ունի _____

- Գրի՛ր պապիկի խրատներ: Օրինակ՝

  Հայրենիքիդ համար մի՛ խնայիր ո՛չ ուժդ, ո՛չ կյանքդ:

_____

_____

_____

_____

- Նամա՛կ գրիր պապիկիդ՝ արտահայտելով քո սերն ու ուշադրությունը նրա հանդեպ:

_____

_____

_____

_____

_____

_____

- Համապատասխան սյունակներում բանաստեղծությունից դու՛րս գրիր պատերազմ և խաղաղություն արտահայտող բառերը:

Պատերազմ	*Խաղաղություն*

- Փակի՛ր աչքերդ ու պատկերացրու՛, որ այլևս պատերազմ չկա աշխարհում և լրացրու՛ աղյուսալում՝ ի՞նչ տեսար, ի՞նչ լսեցիր, ի՞նչ զգացիր:

Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:
Ի՞նչ զգացի:	Վերնագրի՛ր պատկերացրածդ օրը:

- Պապիկ բառի յուրաքանչյուր տառով կազմի՛ր նոր բառեր:

Օրինակ՝

պ - պայուսակ, ա- _____, յ - _____, ու - _____,

ս - _____, ա - _____, կ - _____

- Գրի՛ր ***պա*** վանկով սկսվող ևս 3 բառ:

Օրինակ՝ պատանի, պանիր, _____, _____, _____

- Գրի՛ր բառասկզբի օ և բառամիջի ո ունեցող 3-ական բառ:

_____

_____

ՄԵԾ ՄԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ (էջ 31)

Հարցեր և ***առաջադրանքներ.***

- ✓ Ե՞րբ է գրել մեծ մայրիկը այս նամակը, ո՞ր քաղաքից, ո՞ր երկրից։
- ✓ Նկարագրի՛ր մեծ մայրիկին՝ ըստ նամակի շարադրանքի։
- ✓ Կարդա՛ այն տողերը, որոնցում արտահայտված է մեծ մայրիկի սերը թոռնիկի հանդեպ։
- ✓ Մեծ մայրիկի նամակի համաձայն՝ փորձի՛ր թվել փոքրիկի բարեմասնությունները։
- ✓ Ո՞վ էր մեծ մայրիկի թոռնիկը՝ տղա՞, թե՝ աղջիկ։ Գտի՛ր և կարդա՛ համապատասխան տողերը նամակում, մեկնաբանի՛ր։
- ✓ Ի՞նչ է նշանակում օրհնանք։ Ի՞նչ օրհնանքներ գիտես։ Հարցով դիմի՛ր ձեր տան մեծերին։
- ✓ Մեկնաբանի՛ր նամակում գործածված ***բարի ու անուշ զգացումներով*** արտահայտությունը։
- ✓ Ի՞նչ նկատի ունի հեղինակը ***անուշ սիրտ*** ասելով։
- ✓ Ուշադի՛ր կարդա 4-րդ նախադասությունը և ասա՝ քո կարծիքով փոքրիկի տատիկը իր մայրիկի՞ մայրիկն էր, թե՝ հայրիկի մայրիկը։
- ✓ Քո կարծիքով ի՞նչն էր պատճառը, որ տատիկն ու թոռնիկը միմյանցից հեռու էին ապրում, հիմնավորի՛ր։
- ✓ Ինչպե՞ս էին շատ վաղ ժամանակներում մարդիկ նամակ ուղարկում։ Հարցրու՛ ընտանիքիդ մեծերին, իսկ հիմա՞։

- Դու՛ր գրիր այն նախադասությունը, որում մեծ մայրիկը մաղթանք է հղում թոռնիկին։

_____

_____

- Ի՞նչ օրինանքով է տատիկդ քեզ դիմում, գրի՛ առ։

_____

_____

_____

_____

- Նկարագրի՛ր քո տատիկին՝ լրացնելով համապատասխան տողերը։

Անունը _____

Ազգանունը _____

Տարիքը _____

Ծննդյան օրը _____

Սիրում է _____

Չի սիրում _____

Բնավորությունը _____

Կարիք ունի _____

- Դու ինչպե՞ս կարտահայտեիր քո սերն ու հարգանքը մեծ մայրիկիդ հանդեպ. մի անուշիկ նամա՛կ գրիր՝ նշելով հասցեն։

_____

_____

_____

_____

_____

_____

- Դու՛ր գրիր նամակում գրությամբ և արտասանությամբ անհամապատասխան բառերը և բաժանի՛ր վանկերի։

Օրինակ՝ վերադարձնի- վե-ր-դարձ -նի։

_____

_____

- Նամակից դո՛ւրս գրիր 3-ական բառեր, որոնք քեզ ուրախացրին կամ վշտացրին։

☺	☹

- Տեքստից դու՛ր գրիր հետևյալ տառերն ունեցող բառերը՝

է ----------

ե ----------

օ ----------

ո ----------

և ----------

- Տրված բառերը գրիր առանձին սյունակներով՝ օրինակի պես։

Որդի, Ոսկան, Ոսկեհատ, որդ, ոլոռ, ոստիկան, ոսկեգույն, Ոսկեվազ, ոստայն, Որոտան, Ոստանիկ։

Ո	ո

ԵՐԿՈՒ ԾԱՂԻԿ (էջ 36)

Հարցեր և *առաջադրանքներ.*

- Ի՞նչ ես կարծում որն էր պատճառը, որ ծաղիկները չէին հարմարվում իրենց նոր տանը՝ ծաղկամանին:
- Պատմի՛ր՝ ինչ ես զգացել, երբ որոշ ժամանակ հեռու ես եղել տնից, ծնողներից…
- Ի՞նչ ես մտածում բանաստեղծության մասին, այն ինչ ուղերձ է հղում ընթերցողին:
- Անձնավորի՛ր որևէ ծաղկի և խոսի՛ր նրա կարիքների ու ցանկությունների մասին:
- Գտի՛ր և գրի՛ր այնպիսի ծաղիկների անուններ, որոնք նաև մարդկանց անուններ են:

_____

_____

- Ստեղծի՛ր փոքրիկ պատմություն՝ օգտագործելով տրված բառակապակցությունները՝ սիրուն սար, քնքուշ ծաղիկ, թավ անտառ, երկու ծաղիկ:

_____

_____

_____

_____

_____

♦ Դարձի՛ր որևէ ծաղիկ և պատմի՛ր քո մասին:

Օրինակ՝ Ես վարդակակաչն եմ, ապրում եմ ……:

Թեմա՝ ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ Մայրենի 2, Ա. Քյուրքչյան, Լ. Տեր - Գրիգորյան

ԱՄՓՈՓՈՒՄ - 1 ժամ

Գործունեության ձևեր՝

- Ինքնաարտահայտման տարբեր ձևերով արտահայտել մտքերն ու զգացումները:
- Խոսել մարդկանց, նրանց առանձնահատկությունների մասին, տարբեր մոտեցումներով ներկայացնել բնակավայրը, հայրենիքը, նրա նվիրյալներին, հայրենասիրության դրսևորումներ:
- Խմբային աշխատանքներ և քննարկումներ ըստ առաջարկվող նյութի:
- Թեմատիկ նկարի շուրջ հյուսի ոչ ծավալուն պատմություն
- Պատասխանել հարցերին, դրանց միջոցով որոշի որակական հատկանիշ ցույց տվող բառեր:
- Արտահայտել կարծիք գրավոր նյութի շուրջ:
- Զարգացնել աշխարհաճանաչողական գիտելիքները
- Բացատրել տեքստի նորածանոթ բառերն ու արտահայտությունները, կիրառել դրանք խոսքում:
- Պատմել իր, իր կյանքի մասին:
- Ստեղծել երկխոսություն նյութի հերոսի և իր միջև:
- Ստեղծել թեմատիկ անկյուն՝ նվիրված հայրենիքի նվիրյալներին:
- Ներկայացնել ծանոթ հերոսներից մեկին:
- Վերհիշել հնչյուն, տառ, բաղաձայն և ձայնավոր հնչյունները, երկհնչյուն տառերը:
- Կազմել ինքնաճանաչման թերթիկ և այն պահպանել անձնական թղթապանակում:

Հարցեր	*Այո*	*Ոչ*
Ես ճշմարտախոս եմ:		
Ես չեմ վախենում իմ սխալը խոստովանելուց:		
Ես հետևում եմ իմ տատիկի ու պապիկի խրատներին:		
Ես հոգատար եմ մեծահասակների հանդեպ:		
Ես խնամքով եմ վերաբերվում իմ իրերին:		
Ես ունեմ պարտավորություն խնամել կենդանիներ:		
Ես սիրում եմ խնամել ծաղիկներ::		
Ես մեծ ցանկություն ունեմ շենացնելու հայրենիքս:		